ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/8208/02/24 | ք. Երևան
8 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի միջև 12.12.2023թ.-ին կնքված Պետության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201-17» պայմանագիրը 26.08.2024թ.-ին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 03.09.2024թ.-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն

ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել 12.12.2023թ.-ին կնքված Պետության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201-17» պայմանագրի և Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 03.09.2024թ.-ի որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի միջև 12.12.2023թ.-ին կնքված Պետության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201-17» պայմանագիրը 26.08.2024թ.-ին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 03.09.2024թ.-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել 12.12.2023թ.-ին կնքված Պետության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201-17» պայմանագրի և Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 03.09.2024թ.-ի որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲ

ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի նոյեմբերի 07-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.08 11:20:25 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am